

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հունվարի 31-ի N1Ա որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը գործում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) էներգետիկայի (էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ուճիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորում է իրականացնում իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

2016 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հանձնաժողովի 18 նիստ: Ընդունվել է 71 որոշում՝ 14 նորմատիվ և 57 անհատական:

Որոշման նախագծերը համապատասխանեցվել են օրենսդրության պահանջներին, պահպանվել են իրավական և տեխնիկական բնորոշիչները, տրամադրվել են համապատասխան եզրակացություններ:

Հանձնաժողովի անդամների, ստորաբաժանումների պատասխանատուների մասնակցությամբ մշակվել, ընթացքավորվել է 1497 գրություն, որից 1138 մտից և 359 ելից:

Ստորագրվել է կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթի 264 հրաման, որից 87-ը՝ նախագահի, և 177-ը՝ աշխատակազմի ղեկավարի:

Հանձնաժողովի աշխատակիցները, ծառայողական պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված, համագործակցության և աշխատանքային ծրագրերի շրջանակներում 42 անգամ գործուղվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններ, Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ և արտերկիր (Ուկրաինա):

«Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի համապատասխան կատարվել են՝

- քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարում և ստուգում, աշխատանքային ստաժի հաշվարկ, քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձերի բնականոն աճի վերահսկողություն, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի մշակում և մուտքագրում ծրագրում,

- աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների մասնակցության ապահովում, ատեստավորման գործընթացի կազմակերպում և ատեստավորման համար անհրաժեշտ բնութագրերի, հաշվետվությունների ներկայացում,

- 2017 թվականին ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողների հայտի կազմում:

Հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայքում www.kargavorum.nkr.am տեղադրվել է 63 հայտարարություն և 58 նորություն, 130 հարց ու պատասխան, 153 ակտուալ թեմա, 86 հետաքրքիր նյութ, 14 հոդված, 9 նոր տեսանյութ, 4 ֆոտոալբոմ:

Հաշվետու ժամանակահատվածում վեր-կայքի այցելուների թիվը կազմել է 2990, նախորդ տարվա 2389-ի փոխարեն, այցելությունների ընդհանուր թիվը՝ 8421, նախորդ տարվա 5584-ի փոխարեն: Այցելություններից՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետություններ՝ 7379, Մեծ Բրիտանիա՝ 190, Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ 169, Ռուսաստանի Դաշնություն՝ 168, Ադրբեջանի Հանրապետություն՝ 123, այլ երկրներ՝ 392:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ 25 անգամ, «Ազատ Արցախ» և «Ստեփանակերտ» շաբաթաթերթերի միջոցով՝ 16-ական անգամ, «Հայաստանի Հանրապետություն» թերթում՝ 4 անգամ, «Արցախպրես» գործակալությամբ, Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջերով: Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ 3 համատեղ նիստերը լուսաբանվել են նաև Հայաստանի Հանրապետության 5 («h1», «h2», «Արմենիա», «Շանթ», «Կենտրոն») հեռուստաալիքներով:

Ապահովվել է 9 զանգվածային լրատվության միջոցների և 4 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների պարբերաբար մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին:

Թեժ գծի միջոցով ընդունվել է 3 դիմում-բողոք, որոնք ընթացքավորվել են օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Էներգետիկայի բնագավառում հաշվետու ժամանակաընթացքում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց («Արցախէներգո» ՓԲԸ, «Արցախգազ» ՓԲԸ, «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ, «ԱրցախՅԷԿ» ԲԲԸ, «Իզոտոպ Դելտա» ՍՊԸ, «Պրոտոն» ՍՊԸ, «Ալֆամագ» ՓԲԸ, «Նետրինո» ՓԲԸ, «Իմաստ» ՍՊԸ, «Մեգատոն» ՓԲԸ, «Զուր-էներգիա» ՍՊԸ, «Վիսավտ» ՍՊԸ, «Լև էներջի» ՍՊԸ, «Սահման» ՍՊԸ, «Վիկինգ» ՍՊԸ) ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում:

Հաշվետու ժամանակաընթացքում տրամադրվել է 10 լիցենզիա՝

-«Արցախ ՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աղավնո» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Վիկինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սյունիք» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի կառուցման,

-«Թարթառ էներջի ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գետավան» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«ԱրցախՅԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Թրղի 4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Կոնտինենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հոչանց 1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Հակարի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հագարի 2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման,

-«Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը էլեկտրական էներգիայի արտադրության:

Արդյունքում ԼՂՀ-ում գործող Սարսանգ ՅԷԿ-ին և 12 փոքր ՅԷԿ-երին ավելացել է «Ակունք» փոքր ՅԷԿ-ը: Կառուցման փուլում է գտնվում 9 փոքր ՅԷԿ:

«Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտի հիման վրա Հանձնաժողովը 2 անգամ վերանայել է սպառողներին վաճառվող բնական գազի սակագները: Մինչև 10,0 հազ.խմ սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը նվազել է 10,9 տոկոսով, 10,0 հազ.խմ և ավելի սպառողների համար 12,59 տոկոսով, ինչպես նաև սահմանվել են սպառողների նոր խմբեր՝ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին և վերամշակող կազմակերպություններին՝ ավելի նվազ սակագներով:

Իրականացվել են «Արցախագազ» ՓԲ, «Արցախէներգո» ՓԲ, «ԱրցախՅԷԿ» ԲԲ և «Ջերմային տնտեսություն» ՓԲ ընկերություններում լիցենզիաների պայմանների վերահսկում:

Հանձնաժողովի կողմից կարգավորվող ընկերություններում ստուգվել են քաղաքացիների դիմում-բողոքների հաշվառման մատյանները: Արձանագրված բողոքներից մեծամասնությանը արդեն տրված էր լուծումներ, որոշները՝ ընթացքավորված:

Ուսումնասիրվել են ԼՂՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկաներ:

Ջրային համակարգում իրականացվել է կարգավորվող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների համապատասխան վերլուծություններ, կարգավորվող անձանց թույլտվության պայմանների կատարման հսկողություն:

2016 թվականին տրամադրվել է 1 լիցենզիա «Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերությանը, ինչպես նաև սահմանվել է ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման նոր սակագին:

Ջրային համակարգի ոլորտում այժմ գործում է 4 ընկերություն:

Կազմակերպվել են քննարկումներ ԼՂՀ «Ջրային օրենսգրքում» և «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում կատարվել է «Տեխնոսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համեմատական վերլուծություն:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառ.

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում դադարեցվել է ռադիոհաճախականության օգտագործման 5 թույլտվություն, գործողություն, վերածնակերպվել է ռադիոհաճախականության օգտագործման 1 թույլտվություն: Սեփականության իրավունքի փոխանցման արդյունքում դադարեցվել է տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման 1 լիցենզիայի գործողություն:

Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված 3 ընկերություններից գործունեություն է ծավալում մեկ ընկերություն: Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն է տրամադրված 13 ընկերության:

Միջինը 13,5 տոկոսով նվազեցվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի մի շարք ծառայությունների սակագները: 1,99-4,99 դրամով (9,95-44,4 %-ով) նվազեցվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի թվային ֆիքսված, ֆիքսված անլար միջերես և շարժական կապով ներցանցային և դեպի Հայաստանի Հանրապետության ֆիքսված և շարժական ցանց իրականացվող զանգերի թույլտվությունների սակագները, 200 դրամով (16,6 %-ով)՝ շարժական կապի հետվճարային հեռախոսակապի ամսավճարը:

Սահմանվել է նոր «Հավելյալ օր» ծառայության սակագինը, որը բաժանորդներին հնարավորություն է ընձեռում օգտվել ցանցից նույնիսկ քարտի վավերականության

ժամկետի սպառման պարագայում՝ երկարաձգելով քարտի վավերականության ժամկետը մեկ օրով:

Մի շարք աշխատանքներ են իրականացվել սիրողական ռադիոյի դաշտը կարգավորող իրավական ակտի ընդունման, ինչպես նաև ԼՂՀ-ում ռադիոսպորտի ֆեդերացիայի ստեղծման նպատակով: Նշված որոշման ընդունմամբ օրենսդրության պահանջների համաձայն 2016 թվականի հոկտեմբերին ընդունվել և հրապարակվել է համապատասխան ընթացակարգ: Ստեղծված ռադիոակումբում տեղադրվել է ՀՀ ռադիոսպորտի ֆեդերացիայի կողմից հատկացված կուլեկտիվ օգտագործման սիրողական ռադիոկայանը, որը կարող է օգտագործվել թույլտվություն ունեցող ռադիոսիրողների ցանկացած կուլեկտիվի կողմից:

Հաստատվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվող հաշվետվության լրամշակված ձև, որի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացմանը զուգահեռ մատուցվող ինտերնետ ծառայության նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ու մատուցվող արագությունների աճով:

Քննարկումներ են ծավալվել ներկայացված «Ընտանեկան» փաթեթ նոր առաջարկի վերաբերյալ:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում հայտարարվել է ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) 2 մրցույթ և հեռուստածրագրերի կաբելային հեռարձակման (վերահեռարձակման) 1 մրցույթ: Արդյունքում տրամադրվել է ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) 1 լիցենզիա: Ուժը կորցրած է ճանաչվել 1 ռադիոհաղորդումների վերահեռարձակման լիցենզիայի գործողություն:

Տրամադրված արտոնագրերի (լիցենզիաների) հիման վրա ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստածրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ 3 ընկերություն, որից 2-ը՝ եթերային և 1-ը՝ կաբելային: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում է մեկ հանրային հեռուստառադիոընկերություն:

Յուրաքանչյուր ամիս ուսումնասիրվել և վեր են լուծվել ռադիոընկերությունների կողմից ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների ամենամսյա տվյալները: Իրականացվել են լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային մշտադիտարկումներ:

Կատարվել են ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարողների կողմից 2016 թվականին ԼՂՀ պետական բյուջե վճարման ենթակա ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների տարեկան և եռամսյակային գումարների և 2016-2019 թվականներին ԼՂՀ պետական բյուջե վճարվելիք պետական տուրքերի, ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և կարգավորման պարտադիր վճարների կանխատեսումների հաշվարկները:

Մշակվել են ԼՂՀ և ՀՀ կարգավորող հանձնաժողովների համատեղ աշխատանքային ծրագրեր, պատրաստվել են կարգավորվող ոլորտներում տիրող իրավիճակի և մի շարք տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վերաբերյալ եզրակացություններ, իրականացվել են ռադիոընկերությունների ուղիղ եթերների ընտրանքային մշտադիտարկումներ, որոնց քանակը հաշվետու տարում կազմել է 2 247 ժամ:

Էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ու **փոստային կապի** բնագավառներում հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տարեկան և կիսամյակային ֆինանսական հաշվետվությունների, հանրային շարժական բջջային կապի ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող

եռամսյակային և հեռախոսաֆիկացման վերաբերյալ ներկայացվող կիսամսյակային հաշվետվությունների վերլուծություններ:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում 2016 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման, գերիշխող դիրքի ճանաչման, ապրանքային շուկաների կառուցվածքի և համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրության, ինչպես նաև մենաշնորհի և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվությունների վերլուծությանը: Նշված բնագավառում ընդունվել է 14 անհատական որոշում:

Մանրածախ գների մոնիթորինգ

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է պարենային և ոչ պարենային 37 ապրանքային շուկաների 70 ապրանքատեսակների մանրածախ գների թվով 55 մոնիթորինգ 30 առևտրային օբյեկտում, և կատարվել դրանց արդյունքների վերլուծություն:

Իրականացված դիտանցումների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել ժամանակին նախաձեռնել սեղմված գազ, բենզին, դիզվառելիք, հավի ձու և հացամթերքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրություններ: Արդյունքում 1խ.մ սեղմված գազի իրացման գինը նվազել է 10 դրամով (3,6 տոկոս), մատնաքաշ հացի իրացման միջին գները՝ 20-30 դրամով (մինչև 14 տոկոս), իսկ բենզինի և դիզվառելիքի գները 1 լիտրի համար նվազել են համապատասխանաբար 80 և 70 դրամով (մինչև 18,6 տոկոս): Հավի ձվի իրացման գինը գտնվել է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նույն գնային մակարդակի վրա և չի տարբերվել ՀՀ-ում գործող միջին գներից:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրված 70 ապրանքատեսակներից 42-ի գները նվազել են, 21-ը մնացել անփոփոխ, իսկ 7-ի գները աճել են: Արդյունքում ուսումնասիրված ապրանքների միջին գների համար նշված ժամանակահատվածում արձանագրվել է 6.3% գնանկում:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտում.

Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 55 դիտանցում: Դիտանցումների ընթացքում ուսումնասիրվել են մանրածախ առևտրի ոլորտում իրացվող ապրանքների վրա մատնանշվող տեղեկությունների արժանահավատությունը, օրենսդրության պահանջների համապատասխանությունը, ինչպես նաև հնարավոր մոլորեցման հետ կապված խնդիրները:

Նշված ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում էր նաև կենցաղային տեխնիկայի, հագուստի և կրշիկի իրացման օբյեկտներում սեզոնային բնույթ կրող զեղչերի արտապատկերումը կամ այլ միջոցներով դրանց գովազդումը: Որոշ դեպքերում տնտեսավարող սուբյեկտների կողմից արտապատկերված կամ գովազդված զեղչերը չեն տարածվում ամբողջ տեսականու վրա, սակայն դրանց մասին համապատասխան նշումներ առկա չեն: Այս ոլորտներում հնարավոր են նաև դեպքեր, երբ սուբյեկտները հայտարարում են զեղչեր՝ նախապես բարձրացնելով զեղչվող ապրանքների գները:

Նշված խնդիրները բացառելու նպատակով իրականացված դիտանցումների ընթացքում տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվել և պարզաբանվել է օրենսդրության համապատասխան դրույթները:

Ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն.

Նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել են «Սուրճ», «Թեյ» «Աղ», «Շշալցված աղբյուրի ջուր», «Շշալցված հանքային ջուր», «Գազավորված քաղցրացված ըմպելիք» ապրանքային շուկաները և հացամթերքի մանրածախ առևտրի ոլորտը: Ուսումնասիրություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով Հանձնաժողովը դիմել է ԼՂՀ ֆինանսների նախարարությանը և նշված

ապրանքային շուկաներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ «Սուրճ», «Թեյ» և «Կերակրի աղ» ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը ցածր է, և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ առկա չեն:

«Շշալցված աղբյուրի ջուր», «Շշալցված հանքային ջուր», «Գազավորված քաղցրացված ըմպելիք» ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ չնայած շուկայում գործում են խոշոր սուբյեկտներ, այնուհանդերձ այստեղ առկա է էական մրցակցություն: Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովի համապատասխան որոշումներով «Գազավորված քաղցրացված ըմպելիք» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող է համարվել «Անար» ՍՊԸ (զբաղեցնում է շուկայի ընդհանուր իրացման ծավալի 58.6 տոկոսը), իսկ «Շշալցված աղբյուրի ջուր» և «Շշալցված հանքային ջուր» ապրանքային շուկաներում՝ «Սարգիս գրուպ» ՍՊԸ (զբաղեցնում է համապատասխանաբար՝ 46 և 37,7 տոկոսը):

Հացամթերքի մանրածախ առևտրի ոլորտում կատարված աշխատանքների արդյունքում «Էռմի» փակ բաժնետիրական, «Հայր և որդի Գասպարյաններ» և «Մայակ» ՍՊ ընկերությունները, իրենց կառավարման ներքո ունենալով 3 և ավելի իրացման օբյեկտներից բաղկացած առևտրային ցանց, համարվել են նշված ոլորտում գերիշխող դիրք ունեցող:

Մանրածախ առևտրի ոլորտում գերիշխող դիրք ունեցող «Հարութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող առևտրային օբյեկտներից մեկը դադարեցրել է գործունեությունը, որի հետևանքով Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել մանրածախ առևտրի ոլորտում նշված ընկերության գերիշխող դիրք ունեցող համարող համապատասխան որոշման կետը:

Սենաչնորի և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծություն.

Ներկայումս Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են գտնվում 57 ապրանքային շուկաներում գործող 5 մենաշնորհ և 29 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ:

Հիմք ընդունելով գերիշխող և մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների 2016 թվականի 1-ին կիսամյակի ներկայացրած տեղեկատվությունների ուսումնասիրության արդյունքները՝ առաջարկվել է հետագա ուսումնասիրությունների ընթացքում առավել մեծ ուշադրություն հատկացնել էական փոփոխություն արձանագրած ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների իրացման ծավալների դինամիկայի վրա՝ գերիշխող դիրքի ամրապնդումը, դրա վերացումը կամ նոր գերիշխող դիրքի առկայությունը բացահայտելու նպատակով:

Ընդհանուր առմամբ 2016 թվականի ընթացքում իրականացված մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի, իրացման ծավալների և գնային քաղաքականության 68 ուսումնասիրությունների արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման, մասնավորապես գերիշխող դիրքի չարաչափաներ կրկնումներ չեն հայտնաբերվել:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում կատարած աշխատանքներ.

Մրցակցային միջավայրի զարգացումը խրախուսելու նպատակով դիտանցումներ են իրականացվել նաև ԼՂՀ Մարտունի, Մարտակերտ, Հադրութ և Բերձոր քաղաքներում, ինչպես նաև ԼՂՀ մի շարք գյուղերում գործող առևտրային օբյեկտներում:

Համեմատվել են Ստեփանակերտում և շրջկենտրոններում առկա առաջին անհրաժեշտության միևնույն ապրանքատեսակների մանրածախ գները: Ի համեմատ Ստեփանակերտ քաղաքի՝ Մարտակերտում և Շուշիում ուսումնասիրված ապրանքատեսակների համար գների ընդհանուր հավելագինը կազմել է 4,1%, Հադրութում՝ 4,3%, Բերձորում՝ 4,8%, Ասկերանում՝ 6,2%, Մարտունիում՝ 8,3%:

Շրջկենտրոններում կատարած մանրածախ գների դիտանցումների արդյունքները համադրվել են նաև 2015 թվականի նոյեմբեր ամսին շրջկենտրոններում կատարած դիտանցումների արդյունքների հետ: Համաձայն իրականացրած վերլուծությունների դիտարկված միևնույն 30 ապրանքատեսակների միջին գների համար բոլոր շրջկենտրոններում արձանագրվել է գնանկում: Շուշիում այն կազմել է 7,6%, Հաղրութում՝ 7,5%, Ասկերանում՝ 4,8%, Մարտունիում 4,2% Բերձորում՝ 4% և Մարտակերտում՝ 3,4%: Նշվածը ցույց է տալիս, որ շրջկենտրոններում մանրածախ առևտրի ոլորտը մրցակցային է և մայրաքաղաքում տեղի ունեցող դրական փոփոխությունները ազդում են ԼՂՀ ողջ տարածքի վրա:

Հանձնաժողովի աշխատակազմի վերահսկողության, լիցենզավորման և մուտքերի հաշվառման բաժնի կողմից հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 13 լիցենզիա, հաշվառման է վերցվել 11 նոր սուբյեկտ: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառման վերցված ընկերությունների ընդհանուր թիվը կազմում է 53:

Հանձնաժողովի նախագահի կարգադրության համաձայն՝ ստուգումների և մոնիթորինգների իրականացման համար պատրաստվել են թվով 214 հրամաններ (հանձնարարագրեր), որից 146 հրաման մի շարք տնտեսավարող սուբյեկտների մոտ դիտանցումներ իրականացնելու մասին, 55 հրաման մի շարք տնտեսավարող սուբյեկտների մոտ անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման դիտանցման մասին, 11 հրաման Շուշի, Ասկերան, Հաղրութ, Մարտունի, Մարտակերտ, Բերձոր քաղաքներում գտնվող մի շարք տնտեսավարող սուբյեկտների մոտ դիտանցումներ իրականացնելու մասին, 1 հրաման մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից գազալցակայաններում սեղմված գազի իրացվող գների փոփոխությունների բացահայտման նպատակով դիտանցումներ իրականացնելու մասին, 1 հրաման «Ջան Բոնյունիքեյշըն» ՓԲԸ հեռուստահաղորդումների վերահեռարձակման ծառայությունների փորձնական մատուցման պայմանների դիտանցումներ իրականացնելու մասին:

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին շարունակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների հետ կնքված աշխատանքային ծրագրերի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ կնքված 2016 թվականի աշխատանքների մասին արձանագրության շրջանակներում փոխադարձ համագործակցությունը: Այն միտված էր հանձնաժողովների միջև տեղեկատվությունների փոխանակման, փոխադարձ այցելությունների, միջազգային փորձի ուսումնասիրությունների, օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում 10 անգամ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, ստորագրվել են համատեղ աշխատանքային ծրագրեր, կազմակերպվել մասնագիտական քննարկումներ: ՀՀ գործընկեր հանձնաժողովների պատվիրակություններն այցելել են նաև ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներ և ցուցաբերել նյութական օգնություն:

Հանձնաժողովի պատվիրակությունը մասնակցել է կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) անդամների 44-րդ աշնանային նստաշրջանին, իսկ Հանձնաժողովի նախագահը՝ Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարի, Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանների, հայ-ֆրանսիական արդյունաբերական պալատի նախագահի մասնակցությամբ կազմակերպված գործարար համայնքի ներկայացուցիչների հետ քննարկմանը:

Մասնակցել են նաև Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում կայացած Բենչմարքինգի էքսպերտային աշխատանքային խմբի էլեկտրոնային հաղորդակցության

կարգավորողների Արևելյան գործընկերության (EaPeReg) երկրորդ և Սպառողների իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը նվիրված տեխնիկական սեմինարներին:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների համատեղ նախաձեռնությամբ և օժանդակությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բացվել է ռադիոսպորտի ֆեդերացիա:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, արդարադատության, Էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների հետ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում կարգավորման պարտադիր վճար վճարող 17 սուբյեկտների համար հաշվարկվել է կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը և ուղարկվել կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց ու վերահսկող մարմնին:

2016 թվականի Հանձնաժողովի կարգավորման գործունեությամբ պայմանավորված կարգավորվող անձանց կողմից նախատեսված 445 635,3 հազ. դրամի փոխարեն պետական բյուջե է մուտքագրվել 400 110,7 հազ. դրամ (89,8 տոկոս), այդ թվում՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 177 364,8 հազ.դրամ, որից 55,5 հազ. դրամը տույժ, պետական տուրք՝ 22 858,9 հազ.դրամ, որից 140,6 հազ. դրամը տույժ, ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ 199 887,0 հազ. դրամ, որից 35,1 հազ.դրամ տույժ:

Հանձնաժողովի և նրա աշխատակազմի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կատարվել են 93,1 տոկոսով:

Հանձնաժողովը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է ամսական, եռամսյակային հաշվետվություններ և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վերաբերյալ համապատասխան հաշվարկներ:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ